ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/12-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 02 -ը օգոստոսի 2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ **Կ. Բրուտյանի**, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Գ. Ալեքսանյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **22.05.2023թ**. կնքված № **ԳՀԱՊՁԲ-23-9/12-3** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն **Հավելված № 1-ի և 2-ի:**

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***2,880,000 (երկու միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, ընդունման-հանձնման արձանագրությունը ստորագրելուց հետո, համապատասխան եռամսյակներում, առկա ֆինանսական միջոցների հաշվին, բայց ոչ ուշ քան՝ 11.12.2023թ.

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԼԵՅԿՈ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Ֆուչիկի 27/14
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԴԻ բանկ» ՓԲԸ-Կենտրոն Մ/Ճ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 1181300035780
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01224924
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Գ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հավելված
N ԳՀԱՊՁԲ-23-9/12-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
չ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը՝ ոչ ուշ քան 05.12.2023թ.
45.	Դեղատուփ ավտոմոբիլային	լրակազմ	800	3600	2,880,000	800

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-23-9/12-3 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Գնման առարկայի				
չ/հ	CPV և ապրանքի անվանումները	CPV կոդը	վճարումը նախատեսվում է իրականացնել 2023թ., համապատասխան եռամսյակների, ընդ որում՝	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան՝ 11.12.2023թ.
45.	**Բժշկական օգնության միջոցներ բազմակոմպոնենտ** /Դեղատուփ ավտոմոբիլային/	33141226/2	2,880,000	2,880,000

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

ԱԼԵՅՆԻԿՈՎ ՍԵՐԳԵՅ ՍՈՒՐԵՆԻ
տնօրեն

Գ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ